

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

INTRODUCTION

Սույն ժողովածուն պարունակում է ՀՀ աշխատաշուկայի վերաբերյալ ամփոփ վիճակագրական ցուցանիշների ժամանակագրական շարքեր՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ (նաև՝ ճշգրտված), որոնք կարող են լուսաբանել ոլորտի փոփոխությունները վերջին տարիներին:

Ընդհանուր առմամբ տեղեկատվությունը ներկայացված է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Երևան քաղաքի, ՀՀ մարզերի, գյուղ-քաղաք կտրվածքով, ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական տարբեր բնութագրերով:

Ժողովածուն ներառում է նաև համառոտ մեթոդաբանական պարզաբանումներ հիմնական ցուցանիշների վերաբերյալ, որոնք հիմնականում համապատասխանում են միջազգային ստանդարտներին:

Ժողովածուում ՀՀ աշխատաշուկայի զարգացումները ներկայացված են տարբեր աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա. օգտագործվել են ինչպես պետական վիճակագրական և գերատեսչական հաշվետվությունների, այնպես էլ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքները՝ իրականացված տնային տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում:

Տեղեկատվության հիմնական սպառողներն են պետական կառավարման մարմինները, գիտական, հետազոտական, կրթական հաստատությունները, ՀՀ կենտրոնական բանկը, գործարար հանրությունը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները (Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Եվրոստատ, Եվրոպական կրթական հիմնադրամ, Համաշխարհային բանկ, Եվրասիական տնտեսական միություն, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, ՄԱԿ և այլն) և վիճակագրական տեղեկատվության այլ սպառողները:

Ներկայացված տվյալները հիմնականում հաշվարկված են միջին տարեկան կտրվածքով:

This handbook encompasses time series of summarized statistical indicators on the Armenian labour market on a monthly, quarterly and annual basis (also adjusted) describing the changes in this sector during the past years.

In general, the information is presented both nationwide and broken down by Yerevan city, RA marzes (provinces), as well as by urban/rural, various demographic and socio-economic characteristics.

The handbook also includes brief methodological clarifications on key indicators that are generally consistent with international standards.

The handbook presents the **developments of the RA labour market** based on data received from the different data sources. The results of both state statistical and administrative reports, as well as findings from the labour force sample surveys conducted in households and commercial enterprises, were used.

The main data users are authorities of public administration, scientific, research, educational institutions, the Central Bank of RA, business community, mass media, international organizations (International Labour Organization, Eurostat, Eurasian Economic Union, European Training Foundation, World Bank, OECD, UN, etc.), and other users of statistical information.

The figures presented are mainly computed on an average annual basis.